ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Երկուշաբթի, դեկտեմբերի 22-ին Հայ դերասանական մշտական խումբը ներկայացրեց առաջին անգամ „Արդիւնաւոր պաշտօն" (Доходное мѣсто) կոմ. 5 արարուածով, հեղ. Օստրովսկու, թարգման. Գ. Տէր-Աղէքսանդրեանի և «Վայր ընկնող աստղ» վոդ. 1 արարուածով, թարգ. տ. Վարդուհի Սուքիասեանի: Այս վերջինը մի դատարկ և ծիծաղաշարժ գրուածք է և նշանաւոր է նրանով, որ բաւական լաւ թարգմանված է տ. Վ. Սուքիասեանից:

Օստրովսկու կոմեդիայի 1, 2, 4 և 5 գործողութիւնները ներկայացրին և ցաւում ենք, որ այդ գիշեր հասարակութիւն շատ քիչ կար թատրոնի մէջ, որովհետև թէ ինքը պիեսան շատ գեղեցիկ է և թէ նրա ներկայացումը հայոց բեմի վրա լաւ անցաւ:

Պէտք է նկատել, որ թատրոն գնալու ժամանակ մենք նախապաշարված էինք և կասկածում էինք, որ մեր մշտական խումբը կարողանայ լաւ ներկայացնել այդ գրուածքը, բայց ուրախութեամբ նկատեցինք, որ մեր կասկածները անտեղի էին, որովհետև այդ երեկոյ ամբողջ խումբը կարծես հրաշք էր ուզում գործել: Օր. օր. Աստղիկ, Սիրանոյշ, Ե. Գարագաշեան և Վ. Գարագաշեան, պ. պ. Ադամեան և Մնակեան, որոնց անծանօթ է ռուսական կեանքը և մանաւանդ ռուս կաշառակեր աստիճանաւորների դասակարգը, որի մէջ երբեմնապէս երևում է մի գիսաւոր աստղ, մի փայլուն և ազնիւ բնաւորութիւն, ինչպէս „Արդիւնաւոր պաշտօնի" մէջ Վասիլի Նիկոլայեվիչ Ժադօվն է, յիշեալ օրիորդները և պարոնները շատ լաւ կատարեցին իրանց դերերը: Եթէ մենք դիտաւորութիւն ունենայինք մի երկար քննութիւն գրել, կարող էինք մանրամասնաբար ցոյց տալ պիեսայի արժանաւորութիւնը, նրա նպատակը և նրա մէջ գործող անձանց անհատական բնաւորութիւնները, նոյնպէս և այն, թէ ինչքան գեղեցիկ կերպով ներկայացնող դերասանները ըմբռնել էին այն բոլորը, ինչ որ Օստրովսկի կամեցել էր իր գրուածքով ցոյց տալ հասարակութեանը, բայց այդ չէ մեր նպատակը: Մենք կամենում ենք միայն վկայել, որ ռուսական իրական կեանքից վերցրած այդ պիեսան շատ նման է հայի կեանքին և մեր դերասանական խումբը նրան շատ լաւ ներկայացրեց:

Առանձին ուշադրութեան արժանի է օր. Ե. Գարագաշեանի և պ. Մանդինեանի խաղը:

Օր. Ե. Գարագաշեանին մի քանի սեզոնների մէջ ենք տեսել և նրա դերասանական ընդունակութիւնների մասին լաւ կարծիք ունէինք: Նոյնը յայտնում էին և ուրիշները: Մեր կարծիքով օրիորդին մինչև այժմ չէր աջողվում լաւ խաղալ, որովհետև նա ստիպված էր լինում մասնակցել այնպիսի գրուածքներին, որոնք մի անբնական կեանք էին ներկայացնում և օրիորդը չէր կարողանում ըմբռնել իր կատաղած դերերի բնաւորութիւնը: Ցանկալի կը լինէր, որ օր. Ե. Գարագաշեանը այսուհետև մասնակցէր կոմեդիաններին:

Պ. Մանդինեանը իր դերի մէջ այնքան լաւ էր, այնպէս լաւ ըմբռնել էր Ակիմ Ակիմիչ Իւսովի բնաւորութիւնը, նրա իւրաքանչիւր շարժվածքը, բառերի արտասանութիւնը այնքան համապատասխան և հաշված էին, որ մենք բեմի վրա դերասան չէինք նկատում, այլ տեսնում էինք կեանքի մէջ գործող Ակիմ Ակիմիչ Իւսովին: Այդ դերի աւելի լաւ կատարելը, քան թէ պ. Մանդինեանի խաղը, մենք ոչ մի դերասանից պահանջել չենք կարող:

Վերջապէս պէտք է նկատել, որ ամբողջութիւնը շատ լաւ էր, որ բաւական դժուար է պահպանել Օստրովսկու իւրաքանչիւր պիեսայի մէջ:

Որքան մենք լաւ ենք գտնում դերասանների խաղը և նրանց բարեխղճաբար վերաբերվելը դէպի իրանց գործը, նոյնքան մենք անհեռատես և թատրոնական գործը վարելու համար անընդունակ ենք համարում թատրոնական մասնաժողովը:

Մենք շատ անգամ ասացինք, որ թատրոնական մասնաժողովը սխալ ուղղութեան է հետևում, որ նա փչացնում է ժողովրդի ճաշակը, վնասում է թատրոնական գործին, անդադար տալով պիէսաներ Փրանսիական խոհանոցից, ազդելով հասարակութեան արտաքին զգայարանների վրա:

Մենք շատ անգամ ասացինք, որ պէտք է ներկայացնել կեանքից վերցրած թատրոնական գրուածքներ, հարուածել հասարակութեան թոյլ կողմերը և թատրոնը հասարակական ուսումնարան դարձնել: Մասնաժողովը հասարակութեան մէջ, թէ խօսակցութիւններով և թէ լրագիրների մէջ սկսեց տարածել անհիմն լուրեր, որ ,,Մշակը'' յարձակվում է թատրոնական մասնաժողովի վրա, որովհետև լրագրի խմբագիրը ինքը մի թատրոն ունի, որտեղ մասնաժողովը չուզեցաւ ներկայացումներ տալ:

Պէտք էր ի հարկէ փոքր ինչ առողջ դատողութիւն ունենալ նկատելու համար, որ ,,Մշակը'' քննադատում էր հայոց ներկայացումները, գովում էր նրա լաւ կողմերը և հարուածում էր նրա պակասութիւնները շատ առաջ, քան թէ շինված էր Արծրունու թատրոնը: Բայց իւրաքանչիւր հասարակութեան մէջ կը լինեն շատ միամիտներ, որոնք կը հաւատան այդպիսի անհիմն լուրերին:

Մենք դրա համար չէինք յարձակվում մասնաժողովի ուղղութեան վրա: Մենք բացարձակ ասում էինք, որ էֆէկտներին սովորած հասարակութիւնը, ուրախ լինելով, որ չեն հարուածում իր կենսական պակասութիւնները, լցնում է թատրոնը ատրճանակների ճայթոցը լսելու համար, բայց հէնց որ կեանքից վերցրած պիեսա կը ներկայացնվի, հէնց որ կը քննադատվեն հայի հրէշաւոր պակասութիւնները, կամ կը ներկայացնվի օտար, բայց համանման կեանքից մի պիեսա՝ հայը թատրոն չի գնայ, թատրոնը կիսով չափ դատարկ կը լինի:

Մեր ասածները արդարացան: ,,Արդիւնաւոր պաշտօն'' պիեսան ներկայացնելու ժամանակ հասարակութիւն շատ քիչ կար թատրոնում:

***

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿԻՑ

12 դեկտեմբերի

Վերջին ժամանակներս Գանձակից «Մշակ» լրագրում գրականական ասպարէզը մնացել է տիկիններին. ահա թէ ինչպէս, տիկին Թ. Մ. հաշիւ է պահանջում տիկին Վ. Մ-ից նորա գործունէութեան և նուիրատուութեան ժողովելու մասին, վերջինս իր հաշիւը № 171 տալով ասում է, 135 րուբլ փող է ժողովել, 60 րուբլ հասցրել է հոգաբարձութեան անդամ Ա. Բ. Աւշարեանցին, իսկ մնացեալ 75 րուբլի իր մօտ է, և կասկածելով տիկին Ղլէչեանցից առաջարկած № 131 ապահովագիրը, ասում է՝ չը գիտեմ ումն է տուել և ումից է ստացել ապահովագիրը: Տիկին Ղլէչ. իր պատասխանով № 181 տիկին Մելիքեանցին ժողովարար չը ճանաչելով՝ ասում է, որ ինքը իր պարտքը արդէն հասցրել է հոգաբարձութեանը և ստացել է վերջինից ապահովագիր № 131, և թէ նորա ապահովագիրը թըռցրած չէ. բացի այս մեղադրում է տ. Մելիքեանցին 1-ն, որ նա իրա մօտ պահել է 75 րուբլը և 2-դ, որ նա նուիրատու տիկինների անունները չէ հրատարակել նորանց պատիւը բարձրացնելու նպատակով: Սորան պատասխանում է տիկին Ե. Ս. № 220 և բոլորովին պաշտպանելով Տ. Մ. աւելորդ է համարում նուիրատուների անունները յիշել, հաւատացնելով, որ նորանք չեն տուել որ իրենց անունները փայլի լրագիրներում, այլ թէ նորանք իրենց բարոյական պարտքն են կատարել: Ես կամենում եմ այդ նամակները մի համառօտ քննութեան ենթարկել:

Մենք տեսնում ենք, որ Գանձակի տիկինների մէջ առանձին ցանկութիւն, ազնիւ միտք է յայտնվում օրիորդաց դպրոցի եկամուտները աւելացնելով մտցնել նորա մէջ դաշնամուր և գաղղիերէն լեզու, և այդ իսկ նպատակով ստորագրութիւն բանալով նուիրատուների ցուցակը յանձնվում է տիկին Մելիքեանցին, նա ժողովելով 135 րուբլ՝ 60 րուբլ հասցնում է հոգաբարձութեանը, իսկ 75 րուբլ պահում է իր մօտ:

Ցանկալի էր իմանալ նախ՝ արդեօք տիկին Մելիքեանցը 60 րուբլ հոգաբարձուին տալու ժամանակ հասկացրեց իրանց պայմանի մասին, կամ հոգաբարձութիւնը երբ այդ վաթսուն րուբլին ստացաւ ինչ արաւ, խառնելով դպրոցական գումարի հետ արդէն ծախս է արել, թէ իբրև աւանդ առանձին պահում է մինչև մնացեալների ժողովելը. 2-դ տիկին Մելիքեանցը ինչի մինչև հիմա պահում է իր մօտ 75 րուբլին և ինչ է կամենում անել այդ գումարը, այն ես յանձնելու է հոգաբարձութեանը թէ վերադարձնելու է նուիրատուներին (դաշնամուրը և գաղղիերէնը չը մտցնելու պատճառաւ). Ես կարծում եմ մեր տիկինների պահանջը դաշնամուրի և գաղղիերէնի վերաբերմամբ մեր քաղաքի համար դեռ ևս տարաժամ է և միանգամայն վնասակար. աւելի խոհեմութիւն արած կը լինեն մեր տիկինները, եթէ իրանց մէջի կազմված փոքրիկ ընկերութիւնից ընտրէին հոգաբարձուհիներ և իրենց միջի ժողոված գումարը յանձնելով հոգաբարձութեանը՝ ուսումնարանի անհրաժեշտ ծախսերը հոգային և փոխանակ գաղղիերէնի և դաշնամուրի պահանջէին երգեցողութեան և վայելչագրութեան ուսուցիչներ, որոնք այժմ շտատից դուրս են մնացած. իսկ ինչ մնում է տիկին Ղլէչեանցի 6 րուբլու № 131 ապահովագրի կեղծ կամ օրինաւոր լինելու մասին, դա կը պարզուի միայն հոգաբարձութեան պատասխանովը, և իրաւ ինչպէս մեկնենք մեր դպրոցների հոգաբարձութեան անտարբերութիւնը: Տիկինները լրագրով մեկզմէկու մեղադրում են, ուսումնարանի շահեր են վնասվում, մեր հոգաբարձուները անտարբերութեամբ կարդալով չեն կամենում իրենց մի քանի տող գրութեամբ վերջ տալ նորանց պօլեմիկին: Տիկին Ե. Ս.-ին փաստաբանական պատճառը նուիրատուների անունները չը հրատարակելու մասին թէև ըստ ամենայնի օրինաւոր էր, բայց ես չեմ կարող համաձայնվել տիկնոջ հետ. նուիրատուների անունները հրատարակելը անհրաժեշտ է, ոչ թէ նորանց անունները փայլեցնելու և բարձրացնելու նպատակով, ինչպէս տիկին Ղլէչեանցն է կարծում, այլ ընթերցողների մօտ հաշիւը բոլորովին պարզելու համար, թէև ես առանց այն էլ ինձ թոյլ չեմ տալ կասկածել Տ. Մ. վրա: Ես յոյս ունեմ, որ ինչպէս տիկին Մելիքեանցը, նոյնպէս և դպրոցների հոգաբարձուները այս իմ նամակս կարժանացնեն իրենց բարի ուշադրութեան:

***

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որովհետև ներկայ տարին շուտով վերջանում է և մենք «Մշակի» միայն մի քանի համարներ ունենք հրատարակելու, այդ պատճառով կրկնում ենք մեր խնդիրքը թէ դէպի մեր բաժանորդները և թէ դէպի մեր թղթակիցները: Մեր

մի տեսակ յետադիմութիւն է այս դէպքում: Այո, յետադիմութիւն է:

Իսկ գալով մեր ազգային ուսումնարանների մինչև այժմ աշխարհաբար լեզուի վերաբերութեամբ ցոյց տուած յառաջադիմութեան, մենք ցաւելով պէտք է խոստովանենք, որ նրանց արածը եթէ շատ քիչ չէ, գոնէ անբաւականացուցիչ է: Խօսքը այստեղ ի հարկէ նոր լեզուի դասատուութեան վրա է: Այս հանգամանքը այնքան աւելի աչքի է ընկնում, որքան մենք խիստ ենք վարվում մեր դպրոցների և գրականութեան արտադրած արդիւնքները համեմատելիս: Եւ այդ շատ պարզ է: Ո՞ւմ յայտնի չէ, որ մինչև վերջին տարիները ոչ միայն մեր միջնակարգ, ինչպէս օր. Ներսիսեան, Լազարեան, Խալիպեան և այլն, այլ մինչև անգամ մեր տարրական ուսումնարաններից աշխարհաբար լեզուի դասատուութիւնը միանգամայն արտաքսված էր: Բայց միայն այն ժամանակից—և այդ շատ հեռու չէ—երբ Սաղմոսի, Ժամագրքի, Աւետարանի և Նարեկի թագաւորութիւնը վերացաւ մեր տարրական ուսումնարաններից, երբ մի քանի եռանդոտ մանկավարժներ նրանց համար կենդանի աշխարհաբար լեզուի դասագրքեր յօրինեցին՝ երբ իգական դպրոցների թիւը օրէցօր շատացաւ,—մեր ուսումնարանները մի շատ զգալի քայլով առաջ շարժվեցան: Բայց դժբաղդութիւնն այն է, որ այդ կենսատու րէֆորմին միայն մեր տարրական ուսումնարանները ենթարկվեցան, իսկ միջնակարգները մնացին իրանց վաղեմի անշարժութեան մէջ: Գրաբար լեզուի ուսումը մեր ազգային դպրոցների բարձր դասարաններում ոչ միայն կարելի, այլ ամենաանհրաժեշտ է, բայց նրանց դէպի աշխարհաբարը ցոյց տուած խորին անտարբերութիւնն ու արհամարհանքը միանգամայն դատապարտելի է: Կարդացէք այս րոպէիս Ներսիսեան դպրոցի կամ մանաւանդ Գէորգեան ճեմարանի բարձր դասատան աշակերտների գրաբար, խրթին շարադրութիւնները և դուք կը զմայլէք. բայց աչքի անցրէք նրանց գրած աշխարհաբար մասնաւոր նամակները—և կը սարսափէք: Ոճի սաստիկ խրթնութիւնը, բայերի խոնարհումը, բառերի հոլովումը, մտքերի ամբողջ դասաւորութիւնը մի կատարեալ բաբելոնական պատկեր են ներկայացնում, աշխարհաբար և գրաբար տարրերի խառնուրդից: Բայց այդ դեռ բաւական չէ. նրանց գործածած աշխարհաբար լեզուն ենթարկված է նախ մեր պարբերական հրատարակութիւնների և երկրորդ նրանց միւս դասական առարկաների ուսուցիչների բուռն ազդեցութեան: Այսինքն, ուրիշ խօսքերով՝ այդ ողորմելի կիսակենդան բարբառը ամենևին հայոց լեզուի դասատուութեան արդասիքը չէ....

Ուրեմն պէտք է երևակայել թէ ինչի նման կը լինէր նրանց աշխարհաբարը, եթէ նրանք զրկված լինէին մեր պարբ. հրատարակութիւնների ընթերցանութիւնից, կամ եթէ միւս առարկաները օտար լեզուով աւանդվէին: Եւ Գէորգեան ճեմարանում, գոնէ նրա սաների խօսքերով, մինչև անգամ մի քանի առարկաներ գրաբար լեզուով են աւանդվում....

Ինչ ուզում էք, պարոններ, ասացէք, բայց այդ մի նախատինք է թէ Ներսիսեան դըպրոցի և թէ մանաւանդ Գէորգեան ճեմարանի համար: Եւ դա էլ պակաս յետադիմութիւն չէ իր տեսակում:

Բայց այս նուրբ նկատողութիւնները անելով, մենք ոչ միայն բնաւ հակված չենք ուրանալու վաթսունամեայ Ներս. դպ. մեր հայախօսութեան տուած չափազանց մեծ զարկը, այլ կաւելացնենք, որ դա մինչև 70-երորդ թուականները մենակ արել է այդ կողմից այնքան, ինչքան գուցէ չեն արած Անդրկովկասի բոլոր արական ուսումնարանները միասին գումարած:

Թող աւելորդ չը համարվի վերջապէս ասել և հետևեալը: Մինչև այժմ ոչ միայն օրինաւոր կերպով չեն որոշվել մեր ուսումնարաններում աշխարհաբարի և գրաբարի սահմանները, այլ մայրենի լեզուի խնդիրը ամբողջապէս դեռ ևս անմշակ է մնում: Քանի որ մենք չունենք դրա համար մի մասնագիտական օրգան, այդ հարցի մշակելը գոնէ մասամբ պէտք է զբաղեցնէ մեր մամուլին, բայց գլխաւորապէս և լիովին մեր ապագայ ընդհանուր ուսուցչական ժողովներին:

Որպէս զի այս յօդուածը շատ չերկարացնենք՝ մեր մնացած ասելիքները յետաձգում ենք մինչև մեր միւս, մի շարք յօդուածների լոյս տեսնելը: Այնտեղ մենք առիթ կունենանք աւելի մանրամասն խօսել մեզ զբաղեցնող հարցի միւս կարևոր կէտերի վրա:

Տիգրան Փիրումեանց

բաժանորդներից, ում վրա մնացել են այս տարվայ ապառիկները, խնդրում ենք շուտով ուղարկել մեզ այդ ապառիկները, նոյնպէս խնդրում ենք եկող 1881 թւի համար շուտով գրվել «Մշակին»։ Մեր թղթակիցներից խնդրում ենք գրել որոշ և պարզ, թողնել տեղ տողերի մէջ և լուսանցքներ թղթերի վրա, չը գրել գունատ թանաքով, և աշխատել որքան հնար է աւելի լուրեր հաղորդել, քան երկար նամակներ գրել։

—

Դեկտեմբերի 12-ին, ինչպէս մեզ հաղորդում են, մի երիտասարդ Վասօ Ղամազով անունով գիշերվայ ուշ պահուն գնում է ԹԻՖԼԻՍԻ բաղնիքներից մէնը լողանալու։ Լողարանից դուրս գալու ժամանակ մի Թուրք, Իբադ-Ղասըմ-Բալի-օղլի անունով յարձակվում է նրա վրա և սրի սաստիկ հարուած տալով սպանում է։ Քիսայքսողներից մէնը բռնում է չարագործին, բայց բաղնիքպանը հրամայում է նրան բաց թողնել սպանողին, ասելով, թէ չէ կամենում նրա պատճառով դատի տակ ընկնել։

—

Մի քահանայ, մի շատ հասարակ, կոպիտ Թիֆլիսեցի հայ քահանայ այս օրերս վախճանվել է։ Մենք մի խօսք չէինք ասի, ոչ լաւ և ոչ վատ այդ քահանայի մասին, եթէ «Մեղուի» մէջ չը պատահէինք յանդուգն ստութիւն և շողոքորթութիւն հանգուցեալի մասին։ Սահառունի քահանան, ասում է մեր խաւարասէր թերթը, հազուագիւտ հայ քահանաներից մէնն էր, նա պաշտպան էր լուսաւորութեան և կրթութեան։ Այդ հրէշաւոր, անամօթ սուտը տեսնելով ստիպված ենք ասել ճշմարտութիւնը։ Սահառունի քահանան այն քահանաներից մէնն էր, որոնք մեծ պատիւ չեն բերում հայ քահանայութեանը։ Մոլեռանդ, կեղտոտ, անքարոյական, կոպիտ, կուսարար և առաւօտից մինչև գիշեր միշտ և միշտ հարբած, այնպէս որ փողոցում անցնելով իր ոտների վրա կանգնել չէր կարող,— ահա այն քահանան, որին «Մեղուն» հազուագիւտ է համարում։ Գաղտնիքը ինչումն է. Սահառունին Մակար եպիսկոպոսի մտերիմն էր։ Դրանից ընթերցողը կարող է եզրակացնել, թէ որքան ուղիղ են այն տեղեկութիւնները, որ «Մեղուն» տալիս է իր ընթերցողներին։

—

ՄՕՍԿՎԱՑԻՑ մեզ գրում են, որ յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների հանգանակութիւնը այն պատճառով այդտեղ դանդաղ է ընթանում, որ այդ տեղի հարուստները սպասում են, որ Կ. Պօլսի Ներսէս պատրիարքը նրանցից իւրաքանչիւրին առանձին հրաւիրագրով դիմէ։ Իսկ երկրորդական մարդիկ, հային յատուկ ստրկահոգութիւնից, ի հարկէ ոչ ոք չեն առնի մի բան սկսել առանց հարուստների։

—

Գերմանական «Deutsche Litteratur-Zeitg» լրագրում կարդում ենք մի քննութիւն նորերս Լայպցիգում «Ռուսաց գրականութիւն և քաղաքակրթութիւն» վերնագրով հրատարակված մի գրքի մասին։ Գրքի հեղինակն է Ց. Հօնէգգեր։ Գիրքը լի է ամենաաններելի, ամենակոպիտ սխալներով Ռուսաստանի աշխարհագրութեան, ազգագրութեան և վիճակագրութեան մասին։ Հեղինակը նուիրել է իրան ռուսաց գրականութեան և քաղաքակրթութեան ուսումնասիրութեանը, բայց հարկաւոր չէ համարել գոնէ քիչ թէ շատ ծանօթանալ ռուսաց լեզուի հետ։

—

ԱՍՏՐԱԽԱՆԻՑ մեզ գրում են։ «Պ. Եղիշէ Մեծառունեանց, որ հռչակված է այժմ բժշկական էլիկսիրի գիւտով, որով նա ապրեցնում է մարդկանց մինչև 160 տարի, ինչպէս կարդում ենք «Մշակի» 208 համարում, երկու տարի սրանից առաջ հանդիսացել էր նոյնպէս մանկավարժական ասպարիզում իր հեղինակած աշխարհաբար լեզուի քերականութեամբ, որի համար յայտարարութիւններ ուղարկելով զանազան քաղաքներ, որոնց թւում և Աստրախան, Յովսէփ աւագ քահանայ Բունիաթեանցի ձեռքով բաժանորդներ էր ժողովում այստեղ, նշանակելով 50 կոպէկ բաժանորդագրութեան գինը։ Մեզանից գրվեցան մի քանի անձինք, բայց մինչև այսօր ոչ մի տեղեկութիւն չը կայ, թէ արդեօք յիշեալ քերականութիւնը լոյս պիտի տեսնէ թէ ոչ»։

—

Ղզլչախչախից մեզ գրում են, որ որանից մի ամիս առաջ այդ գիւղի մի 26 տարեկան տղայ պսակվում է մի 10 տարեկան աղջկայ հետ, որին հայրը աղքատութեան պատճառով տուել է տղային, ստանալով նրանից մի սոմար գարի։ Աղջիկը չը կարողանալով ամուսնական պարտք կատարել, փախչում է իր մարդու տանից։

—

Շիրակի մի քանի գիւղերից մեզ գրում են։ «Այստեղ մի վատ սովորութիւն է դարձել պաշլուղ ասված բանը, այն է, որ աղջկայ ծնողները նախ 120, մինչև 150 րուբլ, իսկ երբեմն 200 րուբլ փեսայացուից կանխիկ ստանալուց յետոյ խօսք են տալիս աղջկան նշանելու։ Սորին դասակարգի երիտասարդները չը կարողանալով վճարել վերոյիշեալ պաշլուղը, դիմում են այլ միջոցների, այն է փախցնում են աղջիկներին առանց ծնողների կամքի»։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Երբ Շուշու բնակիչները տեսան, որ անցեալ տարվայ թանգութիւնը հացի վրա այս տարի ևս շարունակվում է, դիմեցին քաղաքագլխին, խնդրելով, որ մի քանի հաւատարիմ մարդիկ ընտրէ, որպէս զի նրանք միշտ կենան արքունական կշռի մօտ և չը թողնեն, որ մանրավաճառները կամ հացթուխները աւելացնեն հացի գինը, նոյնպէս մինչև կէս օր, քանի որ կշռի դրօշակը բարձրացած լինի, իրաւունք չունենան իրանք առնելու։ Կարճ ժամանակում այդ տեսակ միջոցներով աջողվեցաւ հացի գինը էժանացնել։ Այժմ հացը ծախվում է փութը $3^1/_1$ կոպէկով։ Եթէ այդպէս շարունակվի, ժողովուրդը շատ գոհ կը լինի։ Ընտրված մարդիկ սրանք են. Մ. Գիւրջեան, Ա. Բէգ—Խուբլարեան, Ա. Խաչատրեան, Ա. Նաջարեան, Ց. Աստուածատրեան և Ս. Ալլահվերդեան։ Քաղաքիս չքաւոր ազգաբնակութիւնը շատ գոհ է այդ պարոններից»։

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են, որ անցեալ ամսին այդտեղի երկսեռ դպրոցների հոգաբարձութեան նոր ընտրութիւնը կայացաւ և ընտրողական թերթը ուղարկվեցաւ կաթողիկոսի հաստատութեանը, բայց մինչև այսօր ոչինչ տեղեկութիւն չը կայ հոգաբարձուների հաստատման մասին։ Ինչքան մեզ յայտնի է երկսեռ դպրոցների հոգաբարձութիւնը կանոնադրութեան զօրութեամբ հաստատվում է տեղական հոգևոր կառավարութիւնից և ոչ թէ Էջմիածնից։

—

ԹԻՖԼԻՍԻ արուեստագործական դպրոցում, ինչպէս մեզ պատմում են, աշակերտների կերակուրը շատ անգամ թարմ չէ լինում։ Մի և նոյն դպրոցում հայ աշակերտները անդադար իրանց մասին արմեաշկա խօսք են լսում միւս ազգութիւններին պատկանող աշակերտներից։ Հայ մանուկները այդ մասին արդէն մի քանի անգամ գանգատվել են դպրոցի դիրեկտորին։

—

Ակսակօվի «Русь» լրագիրը Մօսկվայի ուսանողների վերջին անկարգութիւնների առիթով յիմարաբար սկսում է քարոզներ կարդալ ուսանողներին իրանց հեռու պահել սօցիալիստներից, քննողական աչքով նայել նրանց ստորերկրեայ գրուածքների վրա և այլն։ Մօսկվայի «Русскій Курьеръ» լրագիրը հարցնում է Ակսակօվից՝ ինչ կապ կայ սօցիալիզմի վարդապետութեան և այն բանի մէջ, թէ ուսանողները հաւաքվելով միասին, իրանց ներքին գործերի մասին էին կամենում խօսել համալսարանի րէկտորի հետ և պարզել մի քանի տնային խնդիրներ, իսկ եթէ պօլիցիայի ու ժանդարմների ոյժով ցրվեցին, դա ոչ թէ այն պատճառով էր, որ նրանց ժողովը քաղաքական նշանակութիւն ունէր, այլ միայն այն պատճառով, որ ուսանողներին առհասարակ արգելված է ժողովել, թէ կուզ ամենաանմեղ բանի վրա, օրական ամենաանհրաժեշտ, ներքին մի պէտքի վրա խօսելու դիտաւորութեամբ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ГОЛОСЪ" ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Կ. Պօլսից դեկտեմբերի 18-ից հաղորդում են հետևեալը։ Առհասարակ բոլոր նաւերին արգելված է գիշերով մտնել Դարդանելեան նեղուցը։ Եթէ մի նաւ չը կատարեց այդ կանոնը, Թիւրքերը իրաւունք ունենն այդ նաւի վրա երկու անգամ թնդանօթ արձակել դատարկ փամփուշտներով, իսկ երրորդ անգամ ռումբ գցել նաւի վրա։ Սովորաբար այդ կանոնը կատարվում էր և նաւերը Դարդանելեան նեղուցի մէջ կանգնում էին։ Բայց վերջին ժամանակները Թիւրքերը աւելի խստութեամբ են կատարում այդ կանոնը։ Նորերումս հետևեալ դէպքն է պատահել։

Ռուսաց առևտրական նաւերից մէկը դեկտեմբերի 3-ին, առաւօտեան 6 ժամին մտել էր նեղուցը։ Նրա վրա թնդանօթ արձակեցին և գնդակը անցաւ նաւի վրա, առանց մէկին վնաս տալու։ Նաւապետը այդ անցքը անյապաղ հաղորդեց ռուսաց հիւպատոսին, որ բողոքեց Թիւրքաց կառավարութեանը։

Դարդանելեան փաշութիւնը պնդում է, որ գնդակը արձակվեցաւ պարապ թնդանօթաձգութիւնից յետոյ, բայց նաւի վրա եղածները հակառակն են ասում։ Յիշեալ նաւի վրա նստած էին 270 թիւրք զինուորներ և երեք օֆիցեր, որոնք Զմիւռնիայից ուղևորվում էին Դարդանելեան նեղուցը։

Թիւրքաց կառավարութիւնը վերջին ժամանակները չափազանց խստութեամբ է հսկում իր ծովեզրների վրա և բոլոր նաւահանգիստները ամրացնում է, վախենալով յանկարծակի յարձակմունքից։ Ամեն օր Թիւրքաց նոր զօրքեր են գալիս Դարդանել։

ՅՈՒՆԱՍՏԱՆ

—

,,Polit. Corresp.‘‘ լրագրին Աթէնքից հաղորդում են դեկտեմբերի 21-ից։ Յունական կառավարութեան պաշտօնական լրագրի մէջ նորերումս հերքվեցաւ յունական և արտասահմանեան լրագիրների հաղորդած լուրերը գերմանական դեսպան Բադօվիցի խօսակցութեան մասին Գէօրգ թագաւորի և Կումունդուրոսի հետ։ Աթէնքի քաղաքական շրջանների մէջ պնդում են, որ դեսպանների առաջարկութիւնները ազդեցութիւն են ունեցել յունական կառավարութեան վրա։

,,Standard‘‘ լրագրին Աթէնքից հեռագրում են, որ յունական կառավարութեանը դեռ ևս պաշտօնապէս յայտնված չէ միջնորդ դատարանի նախագծի մասին։ Այդ լուրը յոյների վրա շատ ծանր տպաւորութիւն գործեց։ Հասարակութիւնը կասկածանքով է վերաբերվում այդ դատարանին։ Ոչ ոք չէ հաւատում, որ նա դրական հետևանքներ ունենայ, որովհետև Թիւրքիան միշտ կը յամառի, քանի որ նա եւրօպական համաձայնութեանը ոչինչ նշանակութիւն չէ տալիս։ Յոյների կարծիքով հարցը խաղաղութեամբ լուծելու համար բոլոր միջոցները արդէն գործ են դրած։ Բեռլինի կօնֆերենցիան կայացրեց այնպիսի վճիռ, որ կարելի է իրագործել և նրան փոփոխելուց յետոյ հարցը աւելի էլ կը խրճճվի։ Քանի որ յոյն հասարակութիւնը այսպէս է տրամադրված, զարմանալի չէ ուրեմն, որ պատերազմական պատրաստութիւնները շարունակվում են։ Երկրի ամբողջ գործունէութիւնը կենտրոնացած է ծովային և պատերազմական մինիստրութիւնների մէջ։ Ամենայն օր Պիրէյ հասնում են զէնքերով և պատերազմական պաշարներով բեռնաւորված նաւեր։

,,Polit. Corresp.‘‘ լրագիրը հաղորդում է դեկտեմբերի 22-ից, որ երկու գարիբալդիաններ Հռօմից ուղևորվել են Աթէնք յունական կառավարութեանը առաջարկելու, որ նա գնի 50,000 հրացաններ Շասպօ, որոնք գտնվում են Բավարիայի և Շվեյցարիայի մէջ։ Պատմում են, որ իտալական կառավարութիւնը իրաւունք չունենալով խանգարել յիշեալ երկու անձանց ճանապարհորդութիւնը, զգուշացրել է յունական կառավարութեանը այդ հրացանները գնելուց, ասելով, որ նա ստիպված կը լինի կալանաւորել այդ հրացանները, եթէ նրանք իտալական նաւահանգիստներից մէկը բերվեն։ Այս պատճառով յունական կառավարութիւնը մերժեց գարիբալդեանների առաջարկութիւնը։

,,Րէյտերի‘‘ ընկերութեանը հաղորդում են, որ դեկտեմբերի 19-ին հասաւ Աթէնք անգլիական մի նաւ, որ բեռնաւորված է կրուպի թնդանօթներով և պատերազմական այլ պաշարներով։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Լրագիրներին Լօնդօնից հաղորդում են յայտնի վիպասան (կին), ժօրժ Էլիօտի, մահուան մասին, որին երբեմն անուանում էին անգլիական ժօրժ Զանդ։ Նա մեռաւ 60 տարեկան հասակում։ Մօտիկ ծանօթների մօտ նա յայտնի էր միստրիս Լիւիս անունով։ Նա ամուսնացած էր իր տաղանդը պաշտող Կրօս անունով մէկ մարդու հետ, որ քսան տարով փոքր էր իրանից։ Նրա բարեկամներից մի քանիսը հաւատացնում էին, որ սա շատ խելացի ամուսնութիւն էր, իսկ միւսները զարմանում էին, որ այդ ամուսնութիւնը այդպէս շուտ կայացաւ նշանաւոր գրող Լիւիսի մահից յետոյ, որի անունը կրում էր և շատ տարիների ընթացքում ընկերակից էր ժօրժ Էլիօտը։ Բայց ժօրժ Էլիօտը Լիւիսի օրինաւոր ամուսինը չէր, որովհետև վերջինի առաջին կինը, որը խելագարված էր, դեռ կենդանի էր։ Ժօրժ Էլիօտի վերջին վէպը «Դանիէլ Դէրօնդա» անունն է կրում և նպատակ ունի հրէական ցեղի լաւ կողմերը ցոյց տալ։ Գիւղական մէկ աղքատ պաստորի աղջիկ, ժօրժ Էլիօտը (Նրա իսկական անունն էր Մարիաննա Էվանս) դաստիարակութիւն ստացաւ իր հօր հարուստ ընկերների մէկից։ Նրա կրթութեան մէջ գործակից եղաւ նրան՝ յայտնի փիլիսոփա, Հերբերտ Սպէնսէր։ Ժօրժ Էլիօտը ուսումնասիրեց մետաֆիզիկա և լօգիկա Սպէնսէրի առաջնորդութեամբ և դեռ շատ երիտասարդ հասակում գրականական ասպարէզը դուրս եկաւ Շտրաուսի «Յիսուս Քրիստոսի կեանքը» գրքի՝ թարգմանութեամբ (1846 թ.)։ Վերջը նա աշխատակցում էր Westminster Review լրագրում, որի ժամանակ ծանօթացաւ Ջօն Ստիւարտ Միլլի հետ։ Ընդամենը նա եօթը րօման գրեց և երեք պօէմ։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբերի։ „Голосъ" լրագիրը հաղորդում է, որ դեկտեմբերի 23-ին մինիստրների մասնաժողովի մէջ կը քննվի հասարակական աշխատանքների հարցը Ռուսաստանի այն տեղերում, որոնք վնասվել են անբերրիութենից։ „Agence Russe" հերքում է այն լուրը, իբր թէ Աշգարի չինական նահանգապետը ստիպում է ռուս առևտրականներին անյապաղ դուրս գնալ չինական սահմաններից, հենց որ կը ծախեն իրանց ապրանքները։

ԼՕՆԴՕՆ, 22 դեկտեմբերի։ „Times" լրագիրը հաղորդում է. բացառական միջոցները, որոնք ենթադրված են Իրլանդիայի մէջ գործադրելու համար, կը լինեն հետևեալները. դադարեցնել Habeas Corpus օրէնքի ոյժը և երդվեալ դատարանը, զէնքեր կրելու և ծախելու իրաւունքը սահմանափակել։

ԿԵՊՏԱՈՒՆ, 22 դեկտեմբերի։ Նախագահ Բրանդտ յայտնեց, որ նա անկարող է յետ պահել բօերներին Տրանսվալի ապստամբութեանը մասնակցելուց և ստիպված կը լինի հրաժարվել նախագահի պաշտօնից։

Կ. ՊՕԼԻՍ, 22 դեկտեմբերի։ Բժշկական քննութիւնը Կումերաույի սպանողին խելագար յայտնեց։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 37 կ., երկրորդ 93 ր., երրորդ 93 ր. 25 կ., չորրորդ 92 ր. 87 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր. 75 կ., երկրորդ 212 ր., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 91 ր., երկրորդ 91 ր.. երրորդ 91 ր. կ., ոսկի 8 ր. 3 կ.։ Ռուսաց 1 ր. Լօնդօնի վրա արժէ 24,97 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 213 մարկ, Փարիզի վրա 263 ֆրանկ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ